

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2015թ. մարտի 3-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, նույն բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մարկոսյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանում բազմակողմանի աղքատության համաթվի վերաբերյալ կլոր սեղան-քննարկմանը,
- ✓ 2015թ. մարտի 3-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Զծնված աղջիկները Հարավային Կովկասում. Հայաստան. պատճառներ ու առաջարկվող լուծումներ» խորագրով հետազոտության արդյունքների ներկայացմանը,
- ✓ 2015թ. մարտի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության 2016-2020թ. ծրագրի նախագծի ներկայացմանը և քննարկմանը,
- ✓ 2015թ. մարտի 5-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Արտակարգ իրավիճակների տեխնիկական խմբի աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. մարտի 5-ին ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը և ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրասիական տնտեսական միության կողմից կազմակերպվելիք արտաքին և փոխադարձ առևտրի գծով տեսակոնֆերանսին,
- ✓ 2015թ. մարտի 5-ին ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Դրամավարկային վիճակագրության վերաբերյալ տեսակոնֆերանսին,
- ✓ 2015թ. մարտի 9-11-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած «Կոմունալ ծառայությունների սակագների

- բարեփոխումների բաշխիչ ազդեցությունների վերլուծություն» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2015թ. մարտի 12-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Արտաքին հատվածի վիճակագրության վերաբերյալ տեսակոնֆերանսին,
 - ✓ 2015թ. մարտի 19-ին ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ֆինանսական շուկայի սուբյեկտների վիճակագրության վերաբերյալ տեսակոնֆերանսին,
 - ✓ 2015թ. մարտի 24-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Մարկոսյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ա. Բաղասյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Քանակական տվյալներ. ինչպես գտնել և օգտագործել դրանք» խորագրով սեմինարին,
 - ✓ 2015 թ. ապրիլի 1-ին ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Մակրոտնտեսական քաղաքականության վերաբերյալ Խորհրդատվական խորհրդի ենթակոմիտեի իններորդ նիստին՝ տեսակոնֆերանսի միջոցով,
 - ✓ 2015 թ. ապրիլի 8-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջգերատեսչական հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի հատուկ նիստին,
 - ✓ 2015 թ. ապրիլի 9-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ազգային կարողությունների զարգացում Հայաստանի բնակարանային քաղաքականության և քաղաքների պլանավորման բնագավառներում» խորագրով աշխատաժողովին,
 - ✓ 2015 թ. ապրիլի 20-21-ը ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «R ծրագրային փաթեթի կիրառմամբ վիճակագրական վերլուծության ակնարկ» թեմայով դասընթացին,
 - ✓ 2015 թ. ապրիլի 28-29-ը ՀՀ ԱՎԾ գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ Է. Գրիգորյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «TAIEX ծրագրի շրջանակներում էլեկտրոնային գնումների համակարգեր» խորագրով աշխատաժողովին: